ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նիստի

Քաղաք. Եղեգնաձոր **25 սեպտեմբերի 2023թ.**

Ժամը՝ 11:00

Մարզխորհրդի նիստը նախագահում է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյանը:

Քարտուղարում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փորձագետ Է.Սարգսյանը:

Մարզխորհրդի նիստի օրակարգի 1-ին հարցի քննարկմանը մասնակցում են Վայոց ձորի թեմի առաջնորդ Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Դ. Սարգսյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Ա. Կարապետյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վ. Խուդավերդյանը, ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության պետ Տ.Կարապետյանը, ՀՀ ՊՆ Զ ԵՎ ԶՀԾ Վայոց ձորի մարզային տարածքային ստորաբաժանման ղեկավար Ա. Նահապետյանը, ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ.Սարգսյանը, ՀՀ ԱԱԾ ՎՁ մարզային վարչության պետ Կ. Միքաելյանը, ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյանը, ՀՀ ՊՆ 5-րդ բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ Հ. Սարգսյանը, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դ.Հարությունյանը, Վայքի համայնքի ղեկավար Մ.Մաթևոսյանը, Եղեգիս համայնքի ղեկավար Ա.Ստեփանյանը, Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյանը:

Օրակարգի առաջին հարց՝ գաղտնի /համապատասխան ընթացակարգով/:

Զեկուցողը համապատասխան ընթացակարգով միայն իրավասու անձանց մասնակցությամբ ներկայացրեց հարցի բովանդակությունը:

Տեղի ունեցան քննարկումներ, և ձևավորվեց դիրքորոշում զեկուցողի կողմից ներկայացված հարցերից բխող գործողությունների հետագա ընթացքի վերաբերյալ:

Զեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝ Ա. Գրիգորյան

Օրակարգի երկրորդ հարց՝ Համայնքների ղեկավարների կողմից պաշտոնավարման ժամանակ օրենսդրական նորմերը պահպանելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցների վերաբերյալ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչ Ա. Գևորգյանի միջնորդագրի քննարկումը:

Օրակարգի երկրորդ հարցի քննարկմանը մասնակցում էին ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Ա. Կարապետյանը, իրավաբանական բաժնի պետ Ն. Մաղաքյանը, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ա. Հախնազարյանը, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ Մ. Մեսրոպյանը, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Ա. Հարությունյանը, ինչպես նաև Արենի, Վայք, Եղեգնաձոր, Եղեգիս համայնքների ղեկավարները:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան- Ներկայացնեմ, որ միջնորդագրում ներկայացվող դեպքը հին է, և վաղեմության ժամկետն անցնելու հիմքով կարճվել է, բայց միջնորդագրի քննարկմամբ մենք պետք է վեր հանենք նմանատիպ երևույթների պատճառները, վերլուծենք իրավիճակները, որպեսզի հետագայում համայնքի ղեկավարները պաշտոնավարման ժամանակ հնարավորինս խուսափեն համանման խնդիրներից և խստագույնս պահպանեն օրենսդրական նորմերը, գործեն բացառապես իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Օրակարգի երկրորդ հարցը ներկայացնելու համար ձայնը տրվեց մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ն. Մաղաքյանին:

24.01.2023թ.-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել ՎՁՄ Գլաձոր համայնքի նախկին ղեկավար Անդրանիկ Արմենի Մարտիրոսյանի /պաշտոնավարել է 2005թ. հոկտեմբերի 9-ից մինչև 2016թ. հոկտեմբերի 24-ը/ պաշտոնավարման ընթացքում թույլ տրված չարաշահումների վերաբերյալ: Վերոգրյալ հանգամանքները

պարզելու նպատակով իրականացվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց շրջանակներում ստացվել են Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 10-015-0073-0009 և 10-015– 072-006 կադաստրային ծածկագրերով հողատարածքների կադաստրային գործերում առկա փաստաթղթերի լուսապատճենները: Դրանց ուսումնասիրությամբ պարզվել է, որ 10-015-0073-0009 կադաստրային ծածկագրով, Գլաձոր բնակավայրի դպրոցին կից համայնքային սեփականություն հանդիսացած հողատարածքը համայնքի ավագանու 18.07.2007թ.–ի որոշմամբ հանվել է աճուրդ վաճառքի, որը կայացել է 25.08.2007թ.–ին, որին մասնակցել և հաղթող է ճանաչվել առավելագույն գին՝ 13.680 ՀՀ դրամ առաջարկած, նույն համայնքի ղեկավար, աճուրդային հանձնաժողովի նախագահ և նույն աճուրդի կազմակերպիչ ու աճուրդավար Ա. Մարտիրոսյանի որդին՝ Արմեն Անդրանիկի Մարտիրոսյանը, որի արդյունքում խախտվել է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետը /սակարկություններին չի կարող մասնակցել աճուրդավարի որդին/: 06.05.2008թ.–ին իրականացվել է վերը նշված հողակտորի առուվաճառք: 10-015-072-006 կադաստրային ծածկագրով, Գլաձոր բնակավայրի նախկին ճաշարանին կից համայնքային սեփականություն հանդիսացած հողատարածքը համայնքի ավագանու 18.07.2007թ.–ի որոշմամբ հանվել է աճուրդ վաճառքի, որը կայացել է 25.08.2007թ.–ին, որին մասնակցել և հաղթող է ճանաչվել առավելագույն գին՝ 16.600 դրամ առաջարկած, Գլաձորի համայնքապետարանում որպես աշխատակազմի գլխավոր մասնագետ-ֆինանսիստ աշխատած Անուշավան Ֆրունզեի Հարությունյանը /աշխատել է՝ 03.01.2002թ.–ից մինչև 19.07.2012թ./, որի արդյունքում խախտվել է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետը /սակարկություններին չեն կարող մասնակցել սակարկությունների կազմակերպչի աշխատակիցները/: 06.05.2008թ.–ին իրականացվել է վերը նշված հողակտորի առուվաճառք:

Վերը նկարագրված դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում արարքի կատարման պահին գործող 308-րդ հոդվածի 1-ին մասով /համապատասխանում է գործող՝ 05.05.2021թ. ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասին/ հատկանիշներով նախաձեռնվել է թիվ 62230823 քրեական վարույթը և կատարվել նախաքննություն:

Պարզվել է, որ գյուղապետ Անդրանիկ Մարտիրոսյանը 19.07.2007թ.–ին ընդունել է թիվ 37 որոշումը, որի համաձայն ներկայացվել է աճուրդ վաճառքի համայնքի վարչական տարածքում գտնվող նախկին ճաշարանին կից 0.0388 հա ընդհանուր մակերեսով տարածք՝ 11 կտորով՝ ըստ գլխավոր հատակագծի: Աճուրդներին մասնակցության հայտեր են ներկայացրել Արմեն Անդրանիկի Մարտիրոսյանը /գյուղապետ՝ Անդրանիկ Մարտիրոսյանի որդին/ և Անուշավան Հարությունյանը /Գլաձոր համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր

մասնագետ-ֆինանսիստը/, վերջիններս ճանաչվել են հաղթողներ և նրանց հետ կնքվել են առուվաճառքի պայմանագրեր, որոնց հիման վրա էլ վերջիններս ստացել են սեփականության իրավունքի վկայականներ:

Թիվ 62230823 քրեական գործի վարույթը կարճվել է վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Նկատի ունենալով, որ թույլ վերահսկողության արդյունքում Գլաձոր համայնքի նախկին ղեկավար Անդրանիկ Մարտիրոսյանի կողմից խախտվել է իր պաշտոնավարման ժամանակ գործող ՀՀ հրապարակային սակարկությունների մասին օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, այն է՝ 2007թ.-ին սակարկություններին չէր կարող մասնակցել աճուրդավարի որդին, ինչպես նաև սակարկությունների կազմակերպչի աշխատակիցը, իսկ հանձնաժողովի անդամներ Սամվել Օրդոյանի և Անուշավան Հարությունյանի կողմից թույլ են տրվել անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, ուստի հետագայում հնարավոր նման իրավիճակները կանխելու նպատակով հարկ է քննարկել միջնորդագրում նշված հանգամանքները, ձեռնարկել համապատասխան գործուն միջոցներ, որպեսզի համայնքների ղեկավարների կողմից պահպանվեն պաշտոնավարման ժամանակ գործող օրենսդրական նորմերը:

Զեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի

իրավաբանական բաժնի պետ՝ **Ն. Մաղաքյան**

Հարց - **ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան**- Պարո՛ն Մեսրոպյան, խնդրում եմ պատասխանել, թե ինչ նկատի ունեն՝ նշելով, որ թույլ վերահսկողության արդյունքում է խախտվել Գլաձորի համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամանակ գործող «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի կետի պահանջը:

Պատասխան - **քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ Մ. Մեսրոպյան**- Մարզպետի աշխատակազմի վերահսկողությունը քննարկվող հարցի ոլորտում ունի մի քանի ուղղություններ: Այս պարագայում կոնկրետ եղել է հողային հարաբերությունների բնագավառում համայնքի ղեկավարի գործունեության նկատմամբ թույլ վերահսկողություն:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան- Հիմա՝ օրենսդրական փոփոխություններից հետո, համայնքի շահերի պաշտպանությամբ ևս

դատախազությունը կարող է մտնել դատարան և ներկայացնել համայնքի շահերը:Եթե դատախազությունն առնչվում է դեպքերի, որտեղ ակնհայտ երևում է, որ համայնքի շահերը չեն պաշտպանվել, միանշանակ կարող է իր իրավասությունների շրջանակում համապատասխան միջամտություն անել:

ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան- Այստեղ արարքը որակվեց որպես ծառայողական անփութություն, սակայն ես այլ իրավական գնահատական կտայի՝ դիտավորություն: Բացահայտ երևում է, որ համայնքի ղեկավարն աճուրդով հողը օտարել է որդուն և աշխատակցին. չէ՞ որ օրենքը հստակ արգելում է մերձավորներին, այս պարագայում՝ կոնկրետ որդուն, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակցին մասնակցել աճուրդին: Պարզապես վաղեմության ժամկետով անձն ազատվել է պատասխանատվությունից: Իսկ մարզպետի աշխատակազմի վերահսկողությունը պետք է այսպես լինի. համայնքի ավագանու և ղեկավարի որոշումները մեկ շաբաթվա ընթացքում ներկայացվում են մարզպետի աշխատակազմ՝ իրավաբանական բաժին, և մարզպետի աշխատակազմն էլ, լինելով բազմագործառութային մարմին, պետք է դիտարկի փաստաթղթերը, հայտնաբերի հնարավոր խնդիրները, խախտումները: Դրանց առկայության դեպքում ավելի դյուրին է այդ փուլում լուծում գտնել, քան երբ գործը դատական վարույթում է՝ և ռեսուրսների, և՛ գործընթացների, և՛ ժամանակի առումով:

Իրավաբանական բաժնի պետ Ն. Մաղաքյան- Հաճախ փաստաթղթերի դիտարկմամբ հնարավոր չէ բացահայտել նշված կապերը. ստանում ենք համայնքի ավագանու որոշումը աճուրդի մասին, ապա ղեկավարի որոշումը աճուրդով վաճառված հողի օտարման մասին:Սակայն եղել են դեպքեր, երբ խնդիրները հենց Ձեր նշած փուլում են հայտաբերվել, և համապատասխան լուծումներ են տրվել:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան- Առաջարկում եմ ավելի ճկուն, հստակ և գործուն մեխանիզմներ մշակել և՛ համայնքի ղեկավարներին համապատասխան տեղեկատվությունը հասանելի դարձնելու, և՛ նմանատիպ խնդիրներից հնարավորինս զերծ մնալու համար:

ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան- Այո՛,պետք է հնարավորինս համեմատվեն տվյալները, բացահայտվեն կապերը:Այս դեպքի պարագայում այլ տրամաբանություն չէր կարող լինել. հստակ երևում է ազգակցական կապը: Հնարավոր են նաև դեպքեր, որոնք պահանջեն լրացուցիչ աշխատանք այդ կապերը վեր հանելու համար, բայց համայնքների պարագայում, թեկուզ նաև խոշորացված, անհնարին չէ դա բացահայտել:

Հարց - Եթե համայնքապետի մերձավորները, փոխկապակցված անձինք, համայնքապետարանի աշխատակիցները ևս ցանկանում եմ մասնակցել մրցույթին, արդյոք արգելքի պարագայում չի խախտվում կամ սահմանափակվում այս մարդկանց իրավունքները:

ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան- Օրենքի դրույթներով կարգավորվում է այդ խնդիրը, մասնավորապես եթե համայնքապետը կամ փոխկապակցված անձն ունի որոշակի տնտեսական շահ, ապա համայնքապետարանը պետք է լրացուցիչ միջոցներ նախատեսի, և համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների միջոցով պատվիրակվի ծառայությունը:Սա շատ ընդունելի և կիրառելի տարբերակ է: Այս դեպքում շահերի բախում չի լինի, բայց անշարժ գույքի արժեքը բնականաբար որոշակիորեն կբարձրանա: Այս և ոլորտը կարգավորող այլ սկզբունքները ամրագրված են և՛ հողային օրենսգրքի, և հրապարակային սակարկությունների օրենքի փոփոխությունների դրույթներում, ավելին՝ 2015թ. Սահմանադրական դատարանի որոշումն էլ կա, որի համաձայն՝ շահերի բախման և հանրային վերահսկողության հարաբերությունները պետք է ապահովվեն:

Ամփոփելով նիստը և շնորհակալություն հայտնելով մասնակիցներին՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը համայնքների ղեկավարներին հորդորեց գործել բացառապես իրենց լիազորությունների շրջանակներում, խստագույնս պահպանել օրենքի նորմերը, իսկ մարզպետի աշխատակազմի իրավասու աշխատակիցներին՝ օգտագործել հնարավոր մեխանիզմները՝ խնդիրները բացահայտելու և վաղ փուլում լուծելու համար:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝ **Ա.Գրիգորյան**